կապես Խլաթի Շահիարմենի վերա տարած հաղթությամբ խլեց Անին թուրքերի ձեռքից, կուսակալ նշանակելով նախ Սադուն (Արծրունի) և ապա Սարգիս Զաքարյան իշխաններին։ Առնում է նա և Դվինը, ըստ Այրիվանեցու «ՈԺԱ. (=1162) և ըստ Վարդանի «ի վեց հարիւր երկոտասան թուին», թեև ժամանակավոր կերպով մի այն*։ Գեորգին յերկրորդ անգամ Անին առնում է 1174 թվին, և վերակացու է նշանակում Իվանե Որբելյանին, իսկ ամիրա՝ Ապիրատ Պահլավունուն Տեր Բարսեղ յեպիսկոպոսի միջնորդությամբ. Վրաց պատմագիրը հաստատելով Իվանե Որբելյանի վերակացությունը, նորան ոգնական է ընդունում Սարգիս Զաքարյանին՝ հակառակ Վարդանի, վոր հավանորեն շփոթություն է յերկու դեպքերի և ժամանակների**։ Բայց մահմեդական իշխանությունները կատարելապես յետ մղվեցան Թամար թագուհու և նորա վորդու Գեորգի Լաշայի ժամանակ, վորոնց գործակից հանդիսացան Զաքարե և Իվանե եղբայրները, իրենց հորեղբոր վորդոց և մյուս հայ իշխանների հետ. իրավամբ Բրոսսեն Թամարի թագավորության պատմությունը նույնացնում է Մխարգրձելիների հերոսական գործունեության հետ, իսկ վրացի գիտնական С. К-зе յուր Грузинская Царица Тамара Великая հոդվածում Իվանե Աթաբեկին անվանում է „фактическим правителем царства“***.

Զաքարյանների ծագման աղբյուրները մութ յեն և հակասական. ըստ Վարդանի, Գանձակեցու և Զաքարիա սարկավագի՝ նոքա քրդական ծագումն ունին և յեկվորներ են։ Ըստ արձագրությունների՝ Բագրատունյաց թագավորական ցեղից, իսկ ըստ Վրաց պատմագրի՝ Պարսից Արտաքսերս թագավորից, վոր առասպել է[1]։ Աղբյուրների այսպիսի հակասության պատճառով՝ վերջին ժամանակի յերկու հայ բանասեր բոլորովին տարբեր յեզրակացության հասան այս խնդրի վերաբերմամբ. մեկը նեստորական քաղդեացիներ համարելով նրանց և ԺԱ. դարու կեսերին Հայաստան յեկած ու հաստատված Զորագետում, մյուսը իրական՝ արձանագրությունների տված տեղեկությունը Բագրատունի

* Գրիգոր յերեց. 426.—Վարդան. 165/6. Յայտաուրը. Ստորագրութի պատմութե բաղմերջանիկ սբ և փառաւորեալ հրպին Ստեփանոսի Սիւնեաց եպսի յաւրինեալ ի տր. Մխիթար վրդպտէ յեպսէ սբ. ուխտին Այրավանաց»։ Պատմական—մատենագրական արժեք ունեցող այս վկայարանության ծանոթությունը պարտական եմ Աշոտ Հովհաննիսյանի սիրալիրության. նրա մոտ յեղած Զ-ից ել արել եմ հարկավոր քաղվածքները այս և ուրիշ տեղերում։

** Վարդան. 169/70. Brosset. Hist. de la Géorgie 387.—Գրիգոր յերեց 429. Այրիվանեցի. Մոսկվա. 1863. եր. 63։

*** Brosset. Additions et éclaircissements, Histoire de la Géorgie. St. Petersb. 1851 թ. 266.—Кавказское Слово. 1916 № 99։

1. Վարդան. 181. Գանձակեցի 154. Brosset. Hist. յեր. 474։ Զաքարիա սարկավագի Պատմություն. Վաղարշապատ. 1870. III. եր. 1։

ծագման մասին*։ Մեր խնդրից դուրս է մտնել Զաքարյանների ծագման պատմության մանրամասնությունների մեջ. մեզ համար կարևորն այն է, վոր նոքա ԺԲ. դարու վերջին քառորդից սկսած առաջնակարգ դեր են սկսում կատարել Վրաց և Հայոց պատմության մեջ, հաստատվելով Զորագետում և գրավելով առաջնության պատիվը բոլոր հայ և վրացի իշխանների մեջ։

Առաջին անգամ Զաքարյանները յերևան են գալիս պատմության մեջ Զաքարեի և Իվանեի հոր՝ Սարգիս մեծի ժամանակ. Զաքարյանց պապերի անվան հիշատակությունն ունինք միայն, առանց տեղեկություն ունենալու նրանց գործերի մասին**։ Տեսանք արդեն, վոր Սարգիս մեծ 1161 թվին Գեորգի Գ-ի կողմից Անիի կառավարիչ էր նշանակված, բայց դրանից ել առաջ մի կարևոր հիշատակություն ունինք Հաղարծնի 1155 թվի մի արձանագրության մեջ, ուր ասվում «մեծ՝ իշխան Սարգիս» «ամիր սպասալար» Գեորգի Գ-ի հետ վանքի վերա իրավասություն ունի***։ Այդ Սարգիսը կարող է մի միայն Զաքարեի և Իվանեի հայրը լինել, վորովհետև վերջինս մի արձանագրության համեմատ այդ վանքը Զաքարյանց ժառանգություն էր[1]. Սովորաբար ամիր սպասալարության տիտղոսը Զաքարյաններին շնորհված է համարվում Թամարի ձեռքով. այս դեպքում 1155 թվի արձանագրությունը մեզ շփոթել կարող է վերոյիշյալ միտքը հաստատելու համար. բայց կարող է փորագրված լինել այն հետին թվով, յերբ Սարգիսն արդեն «ամիր սպասալար» էր, կամ պատմական մի իրողություն է, վորի հաստատության համար ուրիշ աղբյուրներ չունինք։ Այս յերկրորդ մտքին կռվան կարող է լինել մի յերկրորդ արձանագրություն 1181 թվից, ուր Սարգիսը «ամիր սպասալար» տիտղոս ունի դարձյալ[2]. միայն 1187 թվի մի արձանագրության մեջ «ամիր սպասալար Հայոց և Վրաց» է կոչվում[3], վոր արդարև նորություն էր այդպիսի ընդարձակ հասկացողությամբ Զաքարյան տան համար, ինչպես և Որբելյանների կալվածների տիրապետությունը,

* Ա. Շահնազարյան. Շողակաթ. Գիրք Ա. Վաղարշապատ. 1918. Կարապետ եպիսկոպոս. Դոփյանք և Մելիք Շահնազարյանք. ս. Եջմ. 1914։

** Զալալյան Ա. 63. 28.—Յերզնկյանց. Հնախոսական Տեղագրություն Հաղբատա. Վաղարշապ. 1886. եր. 32. Ստուգված մեր կողմից՝ Հաղբատում և Սանահնում.

***. Զալալյան. Ճանապ. ի մեծն Հայաստան. Տրփխիս. 1841. Ա. 135.—Մակար յեպս. Բարխուդարյան. Արցախ. Բագու. 1895. եր. 366։

1 Բարխուդարյան. Արցախ. չունի «հայրենի» 366 Զալալյան. Ա. 131. Շահխաթունյան. Ստորագրություն կաթուղիկե Եջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ Եջմիածին. 1842. Բ. եր. 370։

2 Զալ. Ա. 31. Ազգագրական Հանդես. Խաչատ Հարությունյան Գիրք. Գ. 286. Կ. Կոստանյան. Վիմական Տարեգիր. 33։ Ստուգված մեր կողմից.

3 Զալ. 28. Ազգ. Հանդ. 1898. Գ. գիրք. 304. կա VII. VIII. 391. Կոստանյան. Վիմական Տարեգիր. 36 Ստուգված մեր կողմից։